# Մենինգիտը (մենինգոկոկային հիվանդությունը) նույնասեռական տղամարդկանց/տղամարդկանց հետ սեքսով զբաղվող տղամարդկանց մոտ

## Ո՞վ պետք է պատվաստվի:



Լոս Անջելես վարչաշրջանի վերջին տվյալները ցույց են տալիս սովորականից շատ դեպքեր նույնասեռական տղամարդկանց/տղամարդկանց հետ սեքսով զբաղվող տղամարդկանց (men who have sex with men, MSM) մոտ: Այս թերթիկը նկարագրում է հիվանդությունը, ասում է, ով պետք է պատվաստվի, և որտեղ կարելի է պատվաստում ստանալ:

### 1. Ի՞նչ է մենինգոկոկային հիվանդությունը:

Մենինգոկոկային հիվանդությունը հազվադեպ, բայց լուրջ հիվանդություն է:
Դրա պատճառ են հանդիսանում բակտերիաները (մանրէները): Այն կարող է հանգեցնել լուրջ խնդիրների, ինչպիսիք են՝

- Մենինգիտ (ուղեղի և ողնուղեղի այտուցում)
- Վերջույթի (ձեռք կամ ոտք) կորուստ
- Խլություն
- Ուղեղի վնասվածք
- Մահ

### 2. Որո՞նք են մենինգոկոկային հիվանդության ախտանիշները:

Այն կարող է սկսել գրիպի նման ախտանիշներով, ինչպես նաև կարող է առաջացնել հետևյալը՝

- Բարձր ջերմաստիճան
- Գլխացավ
- Լարված պարանոց
- Ցան
- Սրտխառնոց
- Փսխում
- Զգայունություն լույսի նկատմամբ
- Շփոթություն

### 3. Ինչպե՞ս կարող եք կանխել մենինգոկոկային հիվանդությունը:

Այս առողջ սովորույթները կօգնեն կանխել վարակը՝

- Այս հիվանդությունը կանխելու լավագույն միջոցը պատվաստումն է
- Մի կիսեք ուրիշների հետ թուք տարածող իրեր, ինչպիսիք են՝ սպասք, սնունդ, խմիչք կամ ծխախոտ
- Սահմանափակեք սերտ շփումը հիվանդ մարդկանց հետ

CDCP-IP-0006-04 (08/04/16)

## 4. Ո՞վ պետք է ստանա մենինգոկոկային պատվաստում:

Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունքը խորհուրդ է տալիս մենինգոկոկային պատվաստումը հետևյալ մարդկանց՝

- ՄԻԱՎ (HIV) դրական բոլոր անձանց
- Բոլոր նույնասեռական տղամարդկանց/MSM՝ անկախ ՄԻԱՎ կարգավիճակից կամ վտանգի գործոններից

## 5. Պատվաստման քանի՞ դեղաչափ պետք է ստանան նշված նույնասեռական տղամարդկանց/MSM խմբերը:

| Ո՞վ պետք է ստանա այն: | Դեղաչափերի քանակը |
|---|---|
| ՄԻԱՎ դրական նույնասեռական տղամարդիկ/MSM, ովքեր երբեք մենինգոկոկային պատվաստում չեն ստացել | Պատվաստման 2 դեղաչափ (իրարից 8 կամ ավել շաբաթ հեռու) |
| ՄԻԱՎ դրական նույնասեռական տղամարդիկ/MSM, ովքեր երեխա կամ պատանի ժամանակ ստացել են մենինգոկոկային պատվաստման 1 դեղաչափ | Պատվաստման 1 դեղաչափ այժմ |
| Նույնասեռական տղամարդիկ/MSM (անկախ ՄԻԱՎ կարգավիճակից), ովքեր երբեք մենինգոկոկային պատվաստում չեն ստացել | Պատվաստման 1 դեղաչափ այժմ |
| Նույնասեռական տղամարդիկ/MSM (անկախ ՄԻԱՎ կարգավիճակից), ովքեր դեղաչափ են ստացել 5 կամ ավել տարի առաջ | Պատվաստման 1 դեղաչափ այժմ |

## 6. Որտե՞ղ կարող եք մենինգոկոկային պատվաստում ստանալ:

| Որտե՞ղ կարող եք ստանալ այն: | Լրացուցիչ տեղեկություններ |
|---|---|
| Ձեր անձնական բժշկի կամ առողջապահական խնամքի մատակարարի մոտ | Խնդրում ենք գնալ ձեր սովորական բժշկի մոտ, եթե դուք...<br>• Առողջապահական ապահովագրություն ունեք<br>• ՄԻԱՎ դրական, «Ryan White» ծրագրի իրավասու անհատ եք<br>Մենք խորհուրդ ենք տալիս առողջապահական ծրագրերին ապահովագրել մենինգոկոկային պատվաստումն իրենց անդամների համար: |
| Դեղատներում | Մենինգոկոկային պատվաստումներն առաջարկվում են որոշ դեղատներում:<br>Զանգահարեք ձեր դեղատուն և պարզեք...<br>• Արդյոք նրանք ունեն պատվաստումը<br>• Որ ժամին են բացվում և փակվում<br>• Ով կարող է պատվաստում ստանալ<br>• Ինչ արժե այն |

CDCP-IP-0006-04 (08/04/16)

| | |
|---|---|
| | Այս կայքէջում՝ http://flushot.healthmap.org, նշված են այն դեղատները, որոնք կարող են առաջարկել պատվաստումները: |
| Լոս Անջելես վարչաշրջանի Առողջապահական ծառայությունների բաժանմունքի (Department of Health Services, DHS) կլինիկաներում | Առողջապահական ապահովագրություն չունեցող նույնասեռական տղամարդիկ/MSM կարող են այցելել ցանկացած DHS Հրատապ խնամքի կենտրոն (Urgent Care Center, UCC). UCC վայրերի ու աշխատանքային ժամերի ցուցակը մատչելի է www.dhs.lacounty.gov կայքէջում կամ զանգահարելով 211 հեռախոսահամարով: Ստուգվելու են անհատների ֆինանսական հնարավորությունները, և կախված եկամտից՝ նրանցից կարող է ծախսերի բաժին պահանջվել: DHS-ում սովորական խնամք ստացող անհատները կարող են պատվաստում ստանալ իրենց սովորական մատակարարից: |
| Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջության բաժանմունքի (Department of Public Health, DPH) կլինիկաներում | DPH ունի անվճար պատվաստման կլինիկաներ մենինգոկոկային հիվանդության բարձր վտանգ ունեցող անձանց համար: Կլինիկայի աշխատանքային օրերը, ժամերն ու վայրերը զետեղված են http://publichealth.lacounty.gov/ip/Docs/meningitisclinics.pdf կայքէջում: |

## 7. Որտեղի՞ց կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Centers for Disease Control and Prevention
(Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ)
www.cdc.gov/meningitis/index.html

California Department of Public Health
(Կալիֆորնիայի Հանրային առողջության բաժանմունք)
www.cdph.ca.gov/healthinfo/discond/Pages/MeningococcalDisease.aspx

CDCP-IP-0006-04 (08/04/16)